



“ՔՈՂ ՏՈՒՔ ՄԱՆՔ ՏՂՈՅԸ ՈՐ ԲՆԵՒ ՓԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԼԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1903

ԹԻՒ 6

ՄԱՅԻՍԻ ՊԱՍԿԱԿԻՐԸ

Անգղիոյ մէջ առաջ սովորութիւն մը կար, որ տեղ տեղ կը պահուի տակաւին: Աղջիկները կ'ընտրեն իւրենց մէջէն մէկը որ գեղին մէջ ամէնէն գեղեցիկը կը համարուի, և զանկա Մայիսի Պասկակիրը կ'ընեն: Բոլոր միւս աղջիկներն ալ անոր Պատուակալ Օրիորդները կ'ըլլան: Ամէնն ալ կը զարդարուին ծաղիկներով և ճերմակներ կը հագնին: Գեղեցիկ սովորութիւն միայն թէ մըջերու, նախանձ շարժելու և վշտացնելու վտանգը կայ: Ո՞վ պիտի վճռէ թէ ո՞րն է ամէնէն գեղեցիկը քանի մը հարիւր աղջիկներու մէջ: Թէնիսըն բանաստեղծը շատ սիրուն քերթուած (բանաստեղծութիւն) մը ունի որ «Մայիսի Պասկակիրը» վերնագիրը կը կրէ: Քերթուածին առաջին մասին մէջ աղջիկը կը պատուիրէ մօրը որ զինք կանուխ արթնցնէ առաւօտուն, վաւրն զի ինք Մայիսի Պասկակիր պիտի ըլլայ: Շատ ուրիշ գեղեցիկներ ալ կը գտնուէին, բայց անիկա անոնց ամէնէն գեղեցիկը հրատարակուեցաւ: Քերթուածին վերջին մասին մէջ, երբ յաջորդ նոր տարիին առաջին օրը կու գայ, այն նոյն աղջիկը մահամերձ վիճակի մէջ կը գտնուի իբրև հիւժախտի զոհ մը:



գասերու ամենահին օրինակը մտերի գետնէն հանուեցաւ Եգիպտոսի մէջ: Պայիրոսը, որ սքանչելի վիճակի մէջ գտնուած է, Գրիստոսէ 1,700 տարի առաջ գրուած է, այսինքն Մովսէսի ժամանակէն իբր 400 տարի կամ ներկայ ժամանակէս իբր 3,600 տարի առաջ: Անով կը հաստատուի թէ Եգիպտացիք կատարեալ ծանօթութիւն ունէին տարրական չափագիտութեան գրեթէ մեր ունեցածին հաւասար: Պայիրոսը սա ընդարձակ խորագիրն ունի. «Կանոններ թէ ի՞նչպէս ստանալու է ծանօթութիւն բոլոր խրթին բաներուն», ևն. . . Բազմաթիւ օրինակներ կը ցուցնեն թէ անոնց ամբողջ միութիւններու և կոտորակներու գլխաւոր գործողութիւնները կը կատարուէին գումարումով և բազմապատկութիւնով: Հանում և բաժանում անոնց ծանօթ չէին այժմու ձեւով, և սակայն ուղիղ արդիւնքներ ձեռք կը բերուէին: Ալճեպրական հաւասարութիւններ ալ կը գտնուին պայիրոսին մէջ: Տրուած օրինակներուն մէջ սա խնդիրը կայ. Տասը չափ գարի պիտի բաժնուի տասը հոգիի, այն կերպով որ իւրաքանչիւր յաջորդ իր նախորդին ընդունածէն մէկ ութերորդ չափ պակաս ընդունի: Ուրիշ օրինակ եօթը մարդիկ կան. իւրաքանչիւր ունի եօթը կատու, իւրաքանչիւր կատու կերաւ եօթը մուկ, իւրաքանչիւր մուկ կերաւ եօթը գարիի հատ: Իւրաքանչիւր գարիի հատ, եթէ ցանուէր և մշակուէր, եօթը չափ գարի պիտի տար: Ո՞րչափ գարի կորուած է այդ կերպով:

Հին Եգիպտոսեան ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ
Հին ժամանակներու մանչ տղաք, եթէ ոչ աղջիկներ, թուարանական խնդիրներ լուծելու համար նոյնչափ գծուարութիւններու մէջ կ'իյնային որչափ հիմակուանները: Այդ իրողութիւնը կը հաստատուի Եգիպտոսի մէջ եղած նոր գիւտով մը, որուն վրայ սակայն կը խօսի Անգղիական թերթ մը. Հաւանօրէն թուարանական առտնին

—○○○○—

“ԱՂՕԹՔ ԸՐԻՐ”

Անգամ մը Մր. Մուտի սա գեղեցիկ պատմութիւնն ըրաւ իր փոքրիկ

տղին վրայ. Կինս վար եկաւ իրիկուն մը և ըսաւ թէ դժուարութիւն մը ունեցած էր տղոցմէն մէկուն հետ: Տղան չուզեց հնազանդիլ. և անկողին գնաց առանց ներում խնդրելու իր մօրմէն: Վեր ելայ և նստայ պզտիկ տղին քով և ըսի. «Այս գիշեր աղօթք ըրի՛ր:» «Ես ըրի աղօթքս:» «Աղօթք ըրի՛ր:» «Այո, հայրիկ, ըսի ձեզի թէ ըրի աղօթքս:» «Այո, լսեցի, բայց ըրի՛ր աղօթք:» Պզտիկը սարսեցաւ, դիտեցաւ թէ աղօթք ըրած չէր: Ի՞նչպէս կրնար աղօթել, երբ ծուռ բան մը կար իր սրտին մէջ: Չէր կրնար աղօթք ընել: «Աղէկ,» ըսի, «հիմա պիտի քնանաս առանց աղօթք ընելու:» Քիչ մը վարանելէ ետքը ըսաւ. «Մայրիկս կը կանչեմ:» Մայրը վեր եկաւ, և ուրախութեամբ ներեց, և յետոյ պզտիկը ուզեց անկողնէն ելլել և աղօթք ընել: Ինք ըսած էր իր աղօթքը, բայց հիմա կ'ուզէր աղօթք ընել: Շատեր կ'ըսեն իրենց աղօթքները, լոկ իբրև հանդարտեցուցիչ մը իրենց խղճին, և կ'երթան ու կ'ընեն նուստ ու անվայել բաներ իրենց աղօթքներն ըսելէ ետքը: Բայց աղօթք չեն ըրած, այդ է տարբերութիւնը:

ՊՐԱՋԻԻԿԱԿԱՆ ԿՈՎԱՄԱՌԸ

Մր. փոլ Ֆաունթին անուն մէկը, որ մտերս Հարաւային Ամերիկա ճամբորդեց, կը խօսի Ամազոնի հովտին մէջ բուսող նշանաւոր ծառի մը վրայ, որ կը կարծէ թէ Կեդրոնական Ամերիկայի մէջ ալ կը գտնուի: Ինչպէս ձգախիտի ծառին հիւթը, նոյնպէս նաև այս ծառին հիւթն է որ զանիկա կարևոր ծառ մը կ'ընէ: Անոր հիւթը կովու ալեկէն ընտիր կաթին նման է: Շատ սննդարար է և կրնայ խառնուիլ թէ՛ տաք թէ՛ պաղ ջուրի հետ, և բնաւ չկարի խահուէի, քոքոյի կամ թէյի հետ խառնուած ատեն: Շաբաթ մը կը դիմանայ, և համը շատ կը նմանի կովու կաթին ուրուն մէջ կինամոն դրուած ըլլայ: Հասարակ կաթէն աւելի թանձր է, բերնիդ մէջ հալած խէժի զգացումը կուտայ: Եթէ անչարժ թողուի ժամանակ մը, երեսը կ'ելլէ թանձր, իւրային սեր մը, որ երբ չորնայ, մեղրամոլի կաշուումթիւն կ'ունենայ: Ես մեծ քանակութեամբ խմած եմ անկէ, թէ՛ այն վիճակին մէջ երբ ծառէն կը հանուի, և թէ՛ թէյի կամ քոքոյի հետ խառնուելէն ետքը, ուրոնց հետ աւելի աղէկ կը բաղադրուի:


քան կովու կաթը. և կրնամ ըսել թէ ոչ միայն գերազանցապէս սննդարար է, այլ՝ ամենաթեթեւ ֆուսսակար յատկութիւն մը անգամ չունի: Եթէ կարենայի անկէ գործածել, միշտ կովու կաթէն նախապատու կը սեպէի զանիկա: Երաւին հիւթը կ'առնուի կամ բունին կեղիւր ճեղքուտելով, և կամ կոտրելով մանր ճիւղերը: Առատ կը հոսի, և քանի մը քաշ կարելի է ստանալ միայն մէկ ծառէ քանի մը ժամուան մէջ: Երաւր չերևար թէ հիւթ կորսնցնելէն կը ֆուսուի, եթէ շատ չճեղքուտուի կամ կոտրուի:



ՀԱՌԱՍԱՐԱԿՈՒՅԱԼ ԺԱՅՈՒՆ

Կը յիշենք թէ տեսանք տեղ մը, ուրիկէ կ'անցնի Աֆիոն Գարահասարի երկաթուղին, ուր ժայռերը մաշած էին տարբերքներէն և առած էին տեսակ տեսակ ձևեր: Ժայռերուն քիչ հաստատուն մասերը մաշած էին և մեր առջև կը կենային կոշտ և տձև կենդանիներու խումբի մը պէս, որոնք քար կտրեր էին: Ամերիկեան ֆոլորատո նահանգին մէջ կայ տեղ մը ուր այնպիսի ահագին և հետաքրքրաշարժ երևոյթ ունեցող ժայռեր կը գտնուին, և այն տեղին անունը կը կոչուի «Չաստուածներու Պարտէզ»: Ժայռերէն մէկը կը նմանի վիթխարի ուղի մը, անոնցմէ մէկը կը կոչուի «Մայր Եկեղեցիի Չանգակատուն», մէկը՝ «Բարեբրնի Աշտարակ», ուրիշ մը՝ «Հեփեստոսի Սալը»: Ժայռե-

րուն այս ձևերը տուող ոյժերը գործած են երկար ժամանակ և լուին, և արդիւնքներն են ընտիր բացատրութիւն մը թէ մինչև անգամ խոնարհ մարդիկ և կիներ ի՞նչ մեծ արդիւնքներ կրնան յառաջ բերել համբերութեամբ և յարատուութեամբ բարիք ընելով: Պատկերին մէջ տեսնուած ժայռը հաւասարակշռուած կը կենայ նեղ պատուանդանի կամ խարխուի մը վրայ, և մեծութիւնը կրնայ հասկցուիլ բաղդատելով զանիկա քովը կայնած մարդուն հետ:



ԼՍՈՒԱՄ ԱՂՕԹՔ ՄԸ

Երբ Պատ. Հէնրի Պրոմիի Պրուքլինի մէջ օր մը կ'անցնէր աղքատներու բնակած տան մը մութ մէկ սրահէն, տեսաւ կոտորած դրան մը մէջէն կին մը և անոր երեք զաւակները, որոնք նստած էին մերկ սեղանի մը շուրջ, որուն վրայ կար մէկ նկանակ հաց միայն: Կեցաւ վայրկեան մը, ուշադրութիւնը գրաւուելով այն հանդարտ փոքրիկ խումբին կրթեալ ըլլալուն յայտնի նշանները տեսնելուն պատճառաւ: Ամէնն ալ իրենց գլուխները ծռած միաբերան սեղանի գոհութիւն մը լուին: Այցելու պատուելին աչքերը լեցուեցան արցունքով մինչ վար կ'իջնէր խարխուլ սանդուղէն: Քանի մը ժամ ետքը եկեղեցւոյ սենեակին մէջ հոգաբարձութեան հետ երբ սեղան նստած էր իրիկուան ճաշ ընելու, իրեն առաջարկուեցաւ գոհութիւն տալ: Աղքատիկ խումբին տեսարանը իր մտքին մէջ դեռ թարմ էր, և ինք Ալպէրթ Իշխանին Գերմաներէնէ թարգմանած մէկ երգը ըսաւ, այսինքն այն գոհութիւնը՝ զոր ըսած էին իրենց սեղանին վրայ այն աղքատ կիներ և անոր զաւակները իրենց յիսուն փառանոց ցամաք հացին վրայ, և յետոյ պատմեց կէսօրէն ետքի այն միջադէպը: Սեղանը շրջապատողները ալ մէնն ալ ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ մտիկ ըրին, բայց քաղաքին մէջ գտնուող օտարական մը որ հոն եկած էր գործի մը համար, այնքան զգածուեցաւ պատմուածէն, որ չկրցաւ լուռ կենալ: Մտեցաւ Մր. Պրոմիի, և մանրամասն հարցուփորձ ըրաւ այն ընտանիքին վրայ և թէ հեռուն կը բնակէին: «Ոհ, ոչ,» ըսաւ Մր. Պրոմիի, «չատ մտ կը գտնուին. քանի մը վայրկեանէն կրնանք անոնց քով երթալ: Եթէ կ'ուզէք այցելել անոնց օգնութիւն մը ընելու համար, կրնանք երթալ սեղանէն ետքը:» «Հիմա եր-

թանք," ըսաւ մարդը, «բայց թոյլ տուէք ինծի խօսիլ քիչ մը: Շատ տարիներ առաջ Սկովոտոյ գեղերէն մէկուն մէկ տանը մէջ իմ մեծմայրս սորվեցուց քրոջս և ինծի սեղանի այդ գոհութիւնը ըսել: Ծերունի մեծմայրս մեռաւ: Քոյրս ամուսնացաւ երբ շատ դեռատի էր, և զնաց չեմ գիտեր թէ ո՛ւր: Երկար ժամանակ անցած է անկէ ի վեր և ես չեմ տեսած դանիկա: Բայց միշտ իմ Ամերիկեան տանս մէջ այն համոզումը ունիմ թէ՛ եթէ քոյրս ողջ է, այդ գոհութիւնը կ'ըսուի անոր տան մէջ:" Երէջը և հիւրը արտորոնք ճամբայ ելան: Այն երեկոյեան ժողովը տակաւին չէր ցըրուած երբ Մ. Պրոմի վերադարձաւ և նկարագրեց իր տեսածը զինք չըջապատող խուսիքին:



«Ասիկա է բոլոր տեսածներուս մէջ Աստուծոյ առաջնորդող ձեռքին ամէնէն նշանաւոր գործերէն մին," ըսաւ: «Եղբայր և քոյր անմիջապէս ճանչցան զիրար: Կ'երևի թէ խեղճ կինը աղքատութեան ամէն ձևերէն անցած է, վայելուչ և բարեկեցիկ անէ մը մինչև տխուր ձեղնայարկի մը մէջ չքաւոր կեանք մը: Ժամանակ մը մտոցաւ զԱստուծոյ, և զանցըրաւ իր մեծմոր սորվեցուցած գոհութիւնն ըսել: Ծայրածութիւն կը թուէր այն, մինչ այսքան քիչ բան ունէինք ուտելու», կ'ըսէր: Բայց գոհութեան սա խօսքերը, ինչ որ ընենք, ինչ որ կրենք, նորէն իր սրտին մէջ բերին զանիկա, և ուստի որոշեց. «Եթէ Աստուծոյ կրնայ օրհնել ինչ որ կրեմ, ես պիտի շարունակեմ ըսել աղօթքը:"

Կինը պահեց այս որոշումը, և անոր մէջ գտաւ Աստուծոյին հաւատարմութեան և սիրոյն վրայ աճեցուն հաւատքի պատճառ:

«ԱՍՏՆԿ ՄԵՆԻՄԱՅՐ»

«Բենիկ ապուշ տղայ մըն է," ըսաւ Սառա: «Բենիկ յոգնած է," ըսաւ մեծ մայրը, «պէտք էր որ ժամ ու թին անկողին երթար և հիմա ժամը իննուկէսն է: Բաւական աշխոյժ պիտի ըլլայ երբ քունը առնէ: Անկողին դրէք զանիկա:" Բենիկ յոգնած էր, և քունէն զլուխը կը կախուէր ու կը կախուէր արթուն մէջ մինչև որ բուրովին քունը տարաւ: Բայց լսած էր անոնց խօսածները, և իր փոքրիկ

սրտին մէջ շորհակալ եղած էր իր մեծմոր իր վրայ այնպէս աղէկ խօսելուն համար: Եւ միթէ յաջորդօրը աշխոյժ չեղա՞ւ: Եւ միթէ Սառա իր խօսքը ետ առնելով անոր կողմը չբռնե՞ց: «Բենիկ նեղաբար է," ըսաւ Յակոբ: «Սնօթի է," ըսաւ մեծմայրը: «Նոս ազարակին մէջ այնքան կանուխ նախաճաշ կ'ընենք, որ հարկաւ անոր փորը կ'անօթենայ կէսօրուան ճաշէն շատ մը առաջ: Յակոբ, կաթնարանը գնա, և խմելու մը աղէկ կաթ բեր Բենիկի:" Բենիկ այս բաները պատմեց իր քրոջ Ազապի երբ այն զով կանաչ ազարակէն վերադարձաւ մեծ, տաք քաղաքը: «Ո՛ր չափ երջանիկ եմ ասանկ մեծմայր ու նենալուս համար," ըսաւ Բենիկ:



ՆԻԻ ԵՈՐՔԻ ԾՈՂՆԵՆԱԻՐԸ
Նիւ Եորք քաղաքին գլխաւոր մասը երկար նեղ կղզի մըն է, բայց զանիկա մայր ցամաքէն զատող հոսանքին հիւսիսային կողմը այնքան նեղ է, որ վրան շատ մը կամուրջներ ձգուած են, ուստի կղզին զբերձե թերակղզի մը եղած է: Բայց արևելեան և արևմտեան կողմերը լայն և խորունկ գետեր կան, որոնց մէջէն խոշոր չութեաներ կ'անցնին: Արևմտեան կողմը կայ Հրոսթըն, որ Հիւսիսային Գետ ալ կը կոչուի, և արևելեան կողմը՝ Արևելեան գետը, որ կը կապակցէ Լոնկ Այլընտի Ծանծաղուտը Ատլանտեանի հետ: Այս գետերուն մէկ եզրէն միւսը շոգենաւեր կ'երթեկեկեն շարունակ: Կամուրջ մը կը կապակցէ Նիւ Եորքը Պրուքլինի հետ որ Նիւ Եորքի մէկ մասն է, և այս կամուրջին վրայէն հարիւր հազարաւորներ կ'անցնին ամէն օր ելեկտրաշարժ կառքով կամ օտքով: Բայց ասիկա չյարմարիր ամէնուն որ կ'ուզեն անցնիլ, ոչ ալ երկրորդ կամուրջը որ հիմա կը շինուի: Ամէն օր Նիւ Եորք գացողներուն

թիւը շատ մեծ է: Քաղաքին հիմակուան բնակիչներն են 3 1/2 միլիոն, որոնց մէկ միլիոնը կը բնակէին Պրուքլինի մէջ, և երկաթուղիները ամէն կողմերէ կու գան Նիւ Եորքի մէջ կը կեդրոնանան, ուստի քաղաքին մէջ գործ ընող բազմութիւնը կը մեծնայ անոր մէջէն անցնողներուն վրայ աւելցուելով: 31 գիծ կայ այսպիսի շոգենաւերու որոնք Նիւ Եորք կ'երթան կու գան, և անոնց շատը քանի մը վայրկեանն անգամ մը կը մեկնին քաղաքէն: Բոլոր շոգենաւերը այնպէս շինուած են որ ձիեր և կառքեր ալ կրնան կրել: Անոնք ունին բան մը որ չգտնուիր վոսփորի շոգենաւերուն մէջ, այն է՝ սրահ մը ուր արգելուած է ծխել: և այնպէս կարգադրութիւն եղած է որ ճամբորդները դիւրաւ և հանգստութեամբ կը մտնեն կ'ելլեն: Նաւերը դարձնելու հարկ չկայ, անոնց երկու ծայրերն ալ բաց են, և աւելի քիչ ժամանակ կ'անցնի հոն 1,000 ճամբորդի ցամաք երկրուն համար, քան 100 ճամբորդի վոսփորի շոգենաւերուն համար:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՒ ՈՍԿԻՆ

Մարդիկ որ բարձր դիրք գրաւած են աշխարհի մէջ, շատ անգամ կը սիրեն ետ նայիլ այն պարագաներուն որոնք կեանքին սանդուղէն վեր մընցին զիրենք: Ճերմակ մազերով ծերունի ծովակալ մը սովորութիւն ունէր խօսիլ իր երիտասարդութեան ժամանակ ընդունած շատ բարի խրատի մը վրայ: Խրատը այնպէս ներգործած էր իրեն որ իրեն կ'ընծայէր կեանքի մէջ իր ըրած հաստատուն յառաջդիմութիւնը: Երբ պատանի մըն էր և տակաւին իր նաւին հետ կապակցութիւն չուներ, քանի մը գիշեր խեղճուկ տեղ մը բնակեցաւ: Տան տիրուհին, յարգելի մայր մը, զօրաւոր համակրանք մը ունեցաւ պատանեակին հանդէպ: Պատանին սապէս կ'ըսէ անոր նկատմամբ. «Երբ անոր դացի մնաք բարով ըսել, մարդասէր կինը Աստուծոյնը մը և Անգղ. ոսկի մը խօթեց ձեռքս, ըսելով, Ահա տղաս, առ ասոնք, և Աստուծոյ օրհնութիւն և յաջողութիւն տայ քեզի: Որչափ ատեն որ ապրիս, մի թողուր որ վրագ ինդան ստակիդ կամ աղօթքներուդ համար:"

Յարմար պարագային ըսուած խօսք

մըն էր ասիկա, զոր պատանի նաւաստին բնաւ չմոռցաւ: Իր որոշումին վրայ հաստատ մնալու համար հասարակ հաստատամտութիւն և արիւթիւն բաւական չէին: Բայց տղան անշարժ կեցաւ: Անփոյթներու բազմութեան մէջ իր աղօթքները կ'ըսէր, ջանալով գոցել իր ականջները նախատինքի և ծաղրի դէմ, և մինչև անգամ բանի տեղ չդնել ներքի վարմունքներ իրեն հետ, որչափ որ կըրնար: Երբ նաւէն ցամաք կ'ելլէր, չէր վաաններ իր վաստկած ստակը յիմարաբար, ինչպէս կ'ընէին իր միւս նաւաստի ընկերներէն շատը: Եւ այսպէս հետզհետէ ճանչցուեցաւ իր մեծերէն իր և հաստատամիտ ու բարի վարքի տէր մէկը, և արժանի համարուեցաւ բարձր աստիճանին, որու հասաւ յետոյ:

Ով մեր օրերու պատանիներ, ջանացէք բարի կեանքով ապրիլ: Նաև մի ամէնաք տեսնուելով թէ այսպէս կ'ընէք, Նոյնքան գէշ է ինքզինքդ քու եղածէդ չար ձևացնել, որքան ջանալ քու եղածէդ աւելի բարի կարծել տալ:

ԹՈՒՄԻԿ ԻՆՉՊԵՍ ԼՈՒՍՏԻ ԻՐ ՔՐՈՋ

Թումիկ և Մարիցա տեսութեան գացին իրենց հօրաքոյրին, ընդարձակ ազարակ մը գետին մօտ: Մեծ պատշգամէն (չահնիչին) կրնային վար նախել լայն, փափուլն գետին վրայ: Երբեմն պզտիկ առագաստանաւեր կը սահէին կ'անցնէին, և ատեն ատեն խոշոր շոգենաւ մը ճերմակ մանեակներ կ'արձակէր իր բարձր ծխնելոյղներէն: Եւ երբ կը յոգնէին գետը դիտելէ, ծառաստանը կար, ուր ցած ոստերով ծառեր գեղեցիկ սենեակներ կը ձևացնէին խաղալու համար: Տասը տարեկան Թումիկ շատ կը սիրէր իր փոքրիկ քոյրը Մարիցան, որ վեց տարեկան էր միայն, և Թումիկ ինքզինք շատ մեծ եղբայր մը կը նկատէր, և շատ անգամ կ'ըսէր անոր թէ բան մը չէր կրնար մնասել անոր, քանի որ ինք մօտը կը գտնուէր: Եւ փոքրիկ Մարիցա, վստահ անոր բոլոր ըսածներուն, կը սքանչանար իր եղբոր վրայ իր բոլոր սրտով: Բայց շատ չուտով առիթ ունեցաւ իր քաջութիւնը ցուցնելու: Օր մը երբ երկուքը ծառաստան կ'երթային, անցան մարգագետնէ մը ուր ձիեր կ'արածուէին: Մարիցա վախցաւ արձակուած ձիերէն, անոնք շատ խոշոր և տարօրինակ երեզան առանց իրենց կազմածներուն (թագրմ): «Թումիկ, Թումիկ,

եթէ հիմա այդ ձիերը ցանկին վրայէն այս ճամբուն վրայ նետուին, ինչ պիտի ընենք», ըսաւ: «Բէհ,» ըսաւ Թումիկ քաջութեամբ, «աղջիկները շատ վախկոտ կ'ըլլան: Ես հիմա զանոնք կը վունտեմ: պիտի վախցնեմ զանոնք: Ես բնաւ չեմ վախնար ձիերէ: Ես . . .» ձիչդ այդ վայրկեանին ձիերէն մէկը ցանկէն ասդին ցաթ կեց, և միւս ձիերն ալ անոր օրինակին հետեւեցան: Մարիցա ճիչ մը արձակեց. նոյնպէս ըրաւ Թումիկ ալ: Բայց քաջ փոքրիկ Մարիցա իր տեղը կեցաւ և իր լայն եզերքով դիտարկը տարօրինակ կերպով շարժեց անոնց դէմ, և ձիերը արագութեամբ անդին վազեցին, անտարակոյս զարմանալով թէ ինչ ըսել կ'ուզէր այդ փոքրիկ աղջիկը իր անսովոր շարժումներով: Եւ ո՛ր էր հիմա Թումիկ, իր քրոջ պաշտպանը: Մօտ գտնուած բարձր ցանկի մը ճիչդ գազաթը ելած անոր փաթուած էր, չէր համարձակեր անգամ Մարիցայի նախել, և սաստիկ վախցած ըլլալով չէր կրնար պոռալ: «Թումիկ», ըսաւ Մարիցա, «ինչո՞ւ հող կը կենաս տակաւին, ձիերը գացին, հիմա կրնաս վար իջնել:»

Թումիկ շատ խոնարհ տղայ մը եղաւ, իր փոքրիկ քրոջ հետ տուն գնաց, բայց Մարիցա, ազնիւ փոքրիկ, երբեք բան մը չպատմեց իր քաջութեան վրայով, և իր շատ մը պուպրիկները բաղկաթոռի մը վրայ շարեց պատշգամին անկիւնը, իսկ գալով Թումիկի, անիկա միայն սաչափ ըսաւ, «Մարիցա, կարծեմ այսուհետեւ դո՛ւն ինձի հող պիտի տանիս:»

ԹՈՒՄԻԿԻ ԸՍՏՈՒՆԻ ՄԵՋ

Թուուցիկը շատ ընդհանրացած է ճափոնի մէջ, Բայց զբօսանքը չկայանար լոկ տղին թուուցիկ մը ունենալուն և զանիկա թուուցիկուն մէջ: Տղան կը տեսնէ իր փորձառու հօր կամ մեծ եղբոր զանիկա գիտական սկզբունքով թուուցիկը: Ճափոնցիները զո՛հ չեն ըլլար լոկ թուուցիկով թուուցիկը անոր լարին երկայնութեան չափ հեռու: Անոնք իրենց թուուցիկներուն մըցիլ կուտան ուրիշ թուուցիկներու հետ, և օգոյն մէջ տեղի ունեցած թուուցիկներու կուխը մեծ հետաքրքրութեամբ և եռուանդով կը դիտեն հարիւրաւոր մարդիկ և տղաք: Թուուցիկին լարը մինչև այսինչ հեռաւորութեամբ կ'օժուի սոսինձով խառն փոշիացած ապակիով: Երբ ճարտարութեամբ կը քաջուի լարը ուրիշ թուուցիկի մը լարին քսուելով, կը կտրէ զայն և միւս թուուցիկը կը

զրկէ հովին հակառակ կողմը, մինչ յաղթող թուուցիկը կը թռչի, կը բարձրանայ: Այս ճարտար զբօսանքը վայելելու համար տղաք կը սորվին իրենց թուուցիկները դարձնել արագ արագ օդին մէջ, հոս հոն ցատկեցնել, շեղեցնել կամ սլացնել արագ մը միւս թուուցիկներէն հեռանալու համար, ամէնն ալ թուուցիկին լարին տրուած տարբեր տարբեր ցնցումներով կամ քարշումներով: Թուուցիկներուն մէջ կը գտնուին շատ խոշորներ: Անգամ մը Երզնհամայի մօտ երիտասարդ մը մրցումի մտաւ երեք չորս ուրիշ երիտասարդներու հետ իբր ինք ոտք երկայն և վեց ոտք լայն թուուցիկով մը: Թուուցիկին լարը որ իր ձեռքն էր միայն, իր մարմինին փաթթուեցաւ և ինք գեանէն վերցուելով տարուեցաւ Թուքիոյի Ծոցը, և ջրին երեսէն քառասունուերկու մղոն քաշուեցաւ մինչև որ ազատուեցաւ:

ՄՈՒԱՅՈՒԹԵԱՆ ԲՈՒԺՈՒՄ

Ընտանիքի մը մէջ ծառայող սպասուհի մը սկիզբները շատ մտաւայտ էր: Անոր այս պակասութիւնը անհանգրստութիւն կու տար մասնաւորապէս ճաշի ժամանակները, երբ շատ պիտանի բան մը սեղան բերուած չէր ըլլար: Նիւ Երբքի փո՛ւ լրագիրը կ'ըսէ թէ ընտանիքին մեծը ինչպէս գտաւ դարման մը: Օր մը ընտանիքը սեղան նստած էր և զանգակը զարնուեցաւ սովորական կերպով: Սպասուհին վազեց ճաշի սենեակը: «Մարիամ», ըսաւ տանուտէրը, «հիմա վազէ վեր ձեզնայարկը ու հոս բեր լեծ աննգոյզը:» Մարիամ գէ՛մըր խոժոռեցաւ, բայց վեր վազեց սանդուղը վար բերելու համար: Երբ հինգ վայրկեան ետքը վերադարձաւ սենեակ հե ի հե, յոգնած ըլլալուն պատճառաւ, «Հիւստ», ըսաւ տանուտէրը, «ստանդուղը սենեակին այդ ծայրը կանգնեցուր, և անոր գազաթն իջիր:» Մարիամ ըրաւ իրեն ըսուածին պէս, թէպէտ զարմանալով թէ ինչ կը նշանակէին ասոնք բոլորը: Երբ սանդուղին գազաթը ելաւ, տանուտէրը հանդարտութեամբ ըսաւ, «Մարիամ, դուն հիմա մեզմէ աւելի յարմար դիրք ունիս: հիմա չորս կողմը նայէ և ըսէ մեզի թէ կրնաս տեսնել աղ սեղանին վրայ, կի՛նս և ես չկրցինք գտնել զանիկա:»

Տարեկան բաժանորդագին՝ 6 դահ. արծաթ, կտրիկ, ամէն տեղից համար:

Աւերիկոյի Միտիմարոց Ընկերութեան կողմէն Արտօնատէր ձ. Բ. Կրիւն Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐԵՆԼՄ

ԳՈՍՏԱՆԻՆՈՒԳՈՒԼԻՍ
 Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՅՈՒ ԳՈՅՄԱՆՆ
 Ճինճանքաւ Եղեռնու, Աւերիկա խան